Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի <<Արարատ քաղաքի N5 միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ի հայոց լեզվի և գրականության (12 դասաժամ), տեխնոլոգիայի (8 դասաժամ), հասարակագիտության (10 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:

Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի:

Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝
3. <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
4. Անձը հաստատող փաստաթուղթ,
5. Ինքնակենսագրություն(Ձև 5),
6. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ (առկայության դեպքում),
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ,
9. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

   Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

   Փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի 31-ից մինչև սեպտեմբերի 13-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից: Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 15-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Արարատի մարզի Արարատ քաղաքի N 5 միջնակարգ դպրոցում. Հասցեն՝ ք.Արարատ, ՈԿՖ-ի բանավան, շենք 24: Տեղեկությունների համար զանգահարել՝(0234) 6-38-25 հեռախոսահամարով: